կ աջողի իրագործել իր խեռալը, 1851 ին հիմնելով Հայոց քաղին մէջ տպարան մը՝ արտօնագիրով և քաղքենիներու օժանդակութեան շնորհիւ: Տառերը հայթայթուած են Վենետիկեն, Վիեննայեն ու Պոլիսեն (Միհէնտիսեան): — Ցարութիւն ուզելով լրիւ ճոխացուցել իր գործատունը՝ կ'ուզեւորի Ֆրանսա. կը գտնէ մամուլ և նորաձոյլ տառեր, աջակից ունենալով ԿԱՐԱՊԵՏ [քաջ տոմարագէտ, լեզուագէտ և յօդուածագիր **Արարատյան** և **Արփիի**] ու ՍԱՐԳԻՍ իր հարազատները: — 1853 ին կ'սկսի հրատարակել «Արփի Արարատեան»ը որ կը տեւէ մինչեւ 1856 Յնվր.: — Այնուհետեւ Իզմիրի, Պոլսոյ և արտասահմանի զրավաճառական հրապարակները տարինե՛ր ողողած է բազմաթիւ հատորներով (ֆրնս. բրգմ.) և Հայը մասնաւորապես մղած վիպասիրութեան: — Տպագրական այդ բեղուն գործունէութիւնը դադրած է իր մահով (25 Դեկտ. 1868): — Եղբայրները սակայն մինչեւ 1893 շարունակած են հանգուցեալին բռնած տպարանը, լոյս ընծայելով նորագոյն հատորներ: — Անուանի Տէտէեան Եղբարց տպագրութիւնք՝ որոնց հեղինակներն ու բարգմանիչները եղած են Հ. Յ., Ա. Կ. և Տ. Յ. Տէտէեանք, Գ. Մսերեան, Մ. Մամուրեան (Վ.բոյը), Գ. Պատկանեան, Մ. Նուպարեան, Գր. Զիլինկիրեան, Ս. Միրզայեան, Գ. Պուպլի, Ա. Գ. Կոստանդեան եւայլք, մեծամասնութեամբ Իզմիրցի յայտնի մտաւորականք. — Ագան, Ակամայ բժիշկ, Ադօրագիրք(եր), Ամուրիի մը երգաները, Անիծեալն, Անուշական, Աշխարհի շրջան, Ապաստանարան սիրոյ, Արեւելեան Մամուլ, Գաղտնիք Բարիզի, Ուաշինկրըն, Դատաստիրք, Դրախտահարան, Երեք հրացանակիրք, Եղիշէ, Երկասիրութիւնք Պարտիզպանեանի և Միրզայեանի, 12 կեսարաց պատմութիւն, Զաւան և Փառնակ, Բարոյախօսութիւն, Թշուառներ, Ժողէֆ Պայսամօ, Լ. Պօրֆիա, Խորհրդաւոր կղզի, Կրացիէլլա, 1001 գիշերներ, Հայկական նամականի, Հեռվիճի երդումը, Հռոմայ արարողութիւնք, Մաթիւս, Մահ Պարէտի, Մանոն Լեսքօ, Մարդ, Մարիոն Տրլօրմի խոստովանանքը, Միրզայ և Աննա, Միքրօ մեղաս, Մօնթէ Քրիսթօ, Նաբեկ, Նեռաներ աղաւնի, Նօթրտամ Բարիզի, Ումպք գրասիրութեան, Պարոյր, Ռաֆայէլ, Վերթեր, Տոմարակալութիւն, Տօրա, Փարիզն յԱմերիկա, 20 տարի ետքը, Օմ. Պատմութիւն, Անգղ. նամականի ևն. ևն. և շատ մը դասագիրքեր: — Հասցեներ. 96 կամ 50, Բէշիտիէ Ճատուսի: — 67, Պզտիկ Վէզիր խան:

ՑԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

200. **Տէր Հրանտէս**, տպարանատէր և հրատարակիչ **Թուրակ Հայկազեան** թերթի (1854 - 5):

201. **Գրիգոր Մսերեան**. — Ծնած է Իզմիր 1846 ին: Աշակերտած Մեսրոպեանի և Մխիթարեանց: Կանուխեն կ'իջնէ գործի ասպարէզը, բայց աւելի մտաւորական զբաղմանց կոչում ունեցող անձ՝ մեծաքանակ կը ծախսէ եւրոպական գիրքերու համար, և լրքելով առեւտուրը՝ կ'սկսի գրականութեան (քանի մը բարգմանութիւն և հեղինակութիւն): — Տէտէեանի տպագրական գործունէութեան շրջանին, 1878, ին տպարան մը հիմնած է քանի մը համախոհներու հետ և հրատարակել սկսած իր իսկ խմբագրութեամբ **Մէհէրա** հանդէսը զոր 1881 ին դադրեցու-



ԳՐ. ՄՍԵՐԵԱՆ